

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ № 1

ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի 2023-2024 ուս. տարվա
գիտական խորհրդի նիստի

ք.Երևան

08 սեպտեմբերի 2023թ.

Ներկա էին՝ գիտխորհրդի 24 անդամներից 17-ը (ներկայաթերթիկը կցված է):

Նախագահ՝ ք.գ.թ., դոցենտ. Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար՝ դ.գ.թ., ասիստենտ Լ. Սահակյան

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի հեռակա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանի և Ֆարմաթեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի հայցորդ Անի Արթուրի Չախոյանի ատեստավորման հարցը: **Ձեկուցող՝ Ա. Մկրտչյան:**
2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա ուսուցմամբ ասպիրանտներ Էմմա Առաքելի Խաչատրյանի և Միքայել Սամվելի Թորոսյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման հարցը: **Ձեկուցող՝ Ա. Սաղյան:**
3. Ընթացիկ հարցեր:

ՔՆՆԱՐԿԵՑԻՆ ԵՎ ՈՐՈՇԵՑԻՆ՝

1. Ֆարմացիայի ինստիտուտի Կենսաբժշկագիտության ամբիոնի հեռակա անվճար ուսուցմամբ ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանի և Ֆարմաթեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի հայցորդ Անի Արթուրի Չախոյանի ատեստավորման հարցը:

Հստեցին՝ Ֆարմացիայի ինստիտուտի տնօրեն ք.գ.թ., դոցենտ Աննա Մկրտչյանին, ով հաղորդեց, որ Անժելա Տիգրանի Հարությունյանի ատեստավորման հարցը

քննարկվել է Կենսաբժշկագիտության ամբիոնում (նիստ 1, առ 07.09.2023թ., քաղվածքը կցվում է) և, հաշվի առնելով ասպիրանտի կողմից կատարված աշխատանքները, ամբիոնը երաշխավորել է ատեստավորման: Ա. Մկրտչյանը տեղեկացրեց, որ ուսուցման առաջին տարում ասպիրանտը մասնակցել է «Ընդհանուր պատրաստվածություն» կրթամասի «Պարտադիր դասընթացներ և քննություններ» և «Ընտրովի դասընթացներ» բաժիններով նախատեսված դասընթացներին՝ ստանալով համապատասխանաբար 8 և 16 կրեդիտներ: Ներկայումս ատենախոսական աշխատանքի ղեկավարի հետ միասին մշակված ծրագրով ասպիրանտն իրականացնում է ատենախոսության շրջանակներում նախատեսված գիտահետազոտական աշխատանքները, ամփոփվել են ստացված արդյունքները և նախապատրաստվել է տպագրության համար առաջին հոդվածը:

Այնուհետև ելույթ ունեցավ՝ Ֆարմացիայի ինստիտուտի Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի վարիչ կ.գ.թ., դոցենտ Անահիտ Հովհաննիսյանը, ով հաղորդեց, որ Անի Արթուրի Չախոյանի ատեստավորման հարցը քննարկվել է Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի նիստում (նիստ 2, առ 05.09.2023թ., քաղվածքը կցվում է) և հաշվի առնելով հայցորդի կողմից կատարված աշխատանքները, ամբիոնը երաշխավորել է ատեստավորման: Ա. Հովհաննիսյանը տեղեկացրեց, որ ուսուցման ընթացքում հայցորդը հավաքել է անհրաժեշտ բոլոր կրեդիտները «Ընդհանուր պատրաստվածություն» կրթամասից՝ ստանալով 33 կրեդիտ՝ որից պարտադիր դասընթացներից՝ 12, իսկ ընտրովի դասընթացներից՝ 21 կրեդիտ: Անի Չախոյանը ատենախոսության թեմայով տպագրել է 5 աշխատանք, որից 3 հոդված և 2 թեզիս, ևս 3 հոդված ներկայացվել է հրապարակման: Ընթացիկ քննաշրջանում Ա. Չախոյանը պատրաստվում է հանձնել որակավորման քննությունները:

Որոշեցին՝

1. բաց քվեարկությամբ (միաձայն), հաշվի առնելով Կենսաբժշկագիտության ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել ասպիրանտ Անժելա Տիգրանի Հարությունյանին:
2. բաց քվեարկությամբ (միաձայն), հաշվի առնելով Ֆարմտեխնոլոգիայի և ՖԷԿ-ի ամբիոնի կարծիքը՝ ատեստավորել հայցորդ Անի Արթուրի Չախոյանին:

2. ԵՊՀ Ֆարմացիայի ինստիտուտի առկա ուսուցմամբ ասպիրանտներ Էմմա Առաքելի Խաչատրյանի և Միքայել Սամվելի Թորոսյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման հարցը:

Հստեցին՝ Ատենախոսական աշխատանքի գիտական ղեկավար ք.գ.դ., պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Աշոտ Սերոբի Սադյանին, ով գիտխորհրդի անդամների անդամներից Էմմա Առաքելի Խաչատրյանի՝ «Կոդային ռադիկալում չհագեցած խմբերով տեղակալված (S)- α -ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզ և բժշկական սարքանական սկրինինգ» վերնագրով ատենախոսության թեման, և Միքայել Սամվելի Թորոսյանի՝ «Եռաչափ տպագրությամբ կերամիկական իմպլանտների ստացումը և դրանց մեջ հակաբիոտիկների ներդրման արդյունավետության հետազոտումը» վերնագրով թեման, նախատեսվող աշխատանքները և վերնագրի հաստատման առանձնահատկությունները:

Որոշեցին՝ բաց քվեարկությամբ (միաձայն),

1. Դիմել ԵՊՀ ռեկտորին՝ միջնորդելու Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում Էմմա Առաքելի Խաչատրյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ, «Կոդային ռադիկալում չհագեցած խմբերով տեղակալված (S)- α -ամինաթթուների կենսամիմետիկ ասիմետրիկ սինթեզ և բժշկական սարքանական սկրինինգ» վերնագրով ատենախոսության թեման հաստատելու համար:
2. Դիմել ԵՊՀ ռեկտորին՝ միջնորդելու Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանում Միքայել Սամվելի Թորոսյանի՝ ԺԵ.00.01 «Դեղագիտություն» մասնագիտությամբ, «Եռաչափ տպագրությամբ կերամիկական իմպլանտների ստացումը և դրանց մեջ հակաբիոտիկների ներդրման արդյունավետության հետազոտումը» վերնագրով ատենախոսության թեման հաստատելու համար:

Ընթացիկ հարցեր:

Նիստում ընթացիկ հարցեր չեն քննարկվել:

Գիտական խորհրդի նախագահ,
ք.գ.թ., դոցենտ՝

Ա. Մկրտչյան

Գիտական խորհրդի քարտուղար,
դ.գ.թ., ասիստենտ՝

Լ. Սահակյան